նովան այսպէս է պատմում Վենետիկից հեռացած հայ վարդապետների հաստատուելը Տրիէստում եւ իր կատարած դերը այս գործի մէջ*):

«Վենետիկի Ինկուիզիցիայի քարտուղարը հաղորդեց Վենետիկի Տրիէստի հիւպատոսին, որ ես կարող եմ յուսալ Ինկուիզիտորների դատարանի շնորհքին (Վենետիկ վերադառնալու արտօնութեան), եթէ յաջողիմ հայ վարդապետների կարեւոր գործում, որը նա արտօնում է հիւպատոսին պատմել ինձ:

«Հիւպատոսը քառորդ ժամում ներկայացրեց ինձ այդ գործը, եւ ես հէնց այն ժամանակ հասկացայ, որ ի զուր պիտի կորցնեմ իմ աշխատանքը, բայց եւ այնպէս վճռեցի փորձել:

«Զորս հայ վարդապետներ, այլեւս յոգնած իրենց վանահօր բռնութիւններից, փախել էին Վենետիկի Ս. Ղազար վանքից: Նրանք Պոլսում ունեն շատ հարուստ ազգականներ եւ ծաղրելով ծիրանակիր վանահօր կողմից իրենց վրայ դրուած բանադրանքը՝ գնացել են Վիեննա՝ խնդրելու համար ապաստարան ու հովանաւորութիւն եւ խոստանալով օգտակար լինել Աւստրիային իրենց հաշուին կառուցուելիք տպարանով, որ հոգեւոր գրքեր պիտի մատակարարէ թուրքական կայսրութեան ընդարձակ գաւառներում գտնուող բոլոր հայ վանքերին: Նրանք պարտաւորուել են ծախսել մէկ միլիոն ֆլորին մեծ տպարան հիմնելու եւ մի տուն գնելու կամ շինելու համար այնտեղ, որը կը հաճի իրենց տրամադրել Նորին կայսերական մեծութիւնը: Նրանք մտադիր են բնակուել այդ տան մէջ համայնքով, բայց առանց վանահայր ընտրելու: Ինչպէս եւ պէտք էր ենթադրել, Աւստրիական կառավարութիւնը չվարանեց դոհացնել նրանց խնդրանքը, եւ աւելին դեռ, տուեց նրանց առանձնաշնորհումներ:

«Խնդիրն այն էր, որ աւստրիական կառավարութիւնը ուզում էր Վենետիկից խլել առեւտրի այդ շահաւէտ ճիւղը եւ տեղափոխել Կայսրութեան սահմանները: Այդ պատճառով, Վիեննայի արքունիքը ուղղեց նրանց Տրիէստ, ուժգնօրէն յանձնելով նրանց ծրագիրը նահանգապետի ուշադրութեան, եւ ուր նրանք արդէն վեց ամիս է որ գտնուում են:

«Վենետիկի Ինկուիզիտորները ջերմօրէն ցանկանում էին եւ որոշ չափով էլ յոյս ունէին վերադարձնել Վենետիկ: Առանց յաջողութեան դիմելով ուղիղ միջոցի՝ վանահայրը առաջարկեց համարեա լիովին բաւարարել նրանց ուզածը, ինկուիզիտորները փորձեցին բոլոր դաղտնի միջոցներով արգելքներ յարուցանել նրանց առջեւ, որ ձեռք քաշեն Տրիէստից:

«Հիւպատոսը անկեղծօրէն ասաց ինձ, որ ինքը յանձն չէր առնի զբաղուել այդ գործով, որովհետեւ ամէն տեսակէտից նա թւում է իրեն անհնարին եւ նախագուշակեց, որ եթէ ես յանձն առնեմ, ի զուր տեղը պիտի կորցնեմ բոլոր իմ ջանքերը: Ես այնքա՜ն զգում էի պատուաւոր հիւպատոսի նախագուշակութեան ճիշդ լինելը, որ նոյնիսկ վճռականութիւն չունեցայ այդ բանն ասելու նրան: Ես խոյսն հասկացայ, որ ամէն կերպ պէտք է խոյս տալ, որպէսզի այս բարձրաստիճան պաշտօնեան որեւէ կերպով չկասկածէ, թէ ես աշխատում եմ համոզել վարդապետներին, որ յետ կենան իրենց ծրագրից, որովհետեւ բացի Հանրապետութեան ծառայութեան կողմից իմ վրայ դրուած պարտականութիւններից՝ հիւպատոսը ոգեւորուած էր մասնաւորապէս Տրիէստի առեւտրի ծաղկումով, ուստի եւ քաջալերում ու աջակցում էր հոս վարդապետների ծրագրին:

«Զնայած դրան, դրդուած հայրենիքի կարօտից, ես ծանօթութիւն հաստատեցի վարդապետների հետ, այն պատրանքով, թէ կամենում եմ տեսնել նրանց ձուլած հայերին տաճարն ու Պոլսից վաճառքի համար ստացուած դանազան քարերն ու մետաղները: Ութը թէ տասը օրուան մէջ ես շատ մտերմացայ նրանց հետ: Մի անգամ ես նրանց ասացի, թէ՝ եթէ խնդիրը միայն բանադրանքից ազատուելն է, նրանց արժանապատուութիւնը պահանջում է վերադառնալ ու հնազանդութիւն յայտնել իրենց վանահօր, որին նրանք երդում են տուել:

«Վարդապետներից ամենէն յամառը պատասխանեց ինձ, թէ վանահայրը պահելով իրեն որպէս բռնակալ եւ ոչ որպէս Հայր՝ առաջինն ինքը խախտեց այն կապը, որ փոխադարձաբար ստեղծուած էր իրենց միջեւ: Իսկ ինչ

*) Casanova, Memoires, Edition Garnier Freres. Paris Vol. VIII, p. p. 371-374: